ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

21.05.2014 14:43

Հարգելի գործընկերներ,

Տեղեկացնում ենք, Ձեզ, որ **2014 թվականի մայիսի 30-ին, ժամը 12:00-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (ք. Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ) դահլիճում** տեղի կունենա հանդիպում-քննարկում ***«Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի հիմնական դրույթները»*** թեմայով: **Հանդիպման բանախոսներն են՝** Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գագիկ Հարությունյանը** և հանձնաժողովի անդամ՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» ծրագրի ղեկավար Հայաստանում **Վարդան Պողոսյանը**:

Խնդրում ենք հանդիպմանը մասնակցելու համար մինչև 2014 թվականի մայիսի 28-ը գրանցվել՝ ուղարկելով հաղորդագրություն info@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին: Խնդրում ենք հաղորդագրության մեջ նշել Ձեր անունը, ազգանունը և փաստաբանական գործունեության արտոնագրի համարը և կոնտակտային տվյալ:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })